ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/46

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Ա.Ներսիսյանի (լիազորագիր տրված՝ 09.03.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.03.2020թ. թիվ 26/26-1/3391-2020 գրությամբ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 28.02.2020թ. թիվ 01/61-4049 գրության հիման վրա, 05.03.2020թ. թիվ 26/26-1/3391-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/46 ընթացակարգի շրջանակներում 10.03.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.02.2020թ. թիվ 01/61-4049 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 13.12.2019 թվականին հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/11» ծածկագրով Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ընթացակարգ:

Պատվիրատուն հայտնել է, որ սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն և գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն:

Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո, 10.02.2020 թվականին, Ընկերությանը ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/11» ծածկագրով Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Ընկերությունը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն առաջարկել է, ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով, Ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/46 ընթացակարգի քննության շրջանակներում 10.03.2020թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նիստի ընթացքում հայտնել է, որ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, Պատվիրատուին չի ներկայացրել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, որի համաձայն՝ վերջինս զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի այն հարցադրմանը, թե արդյոք Պատվիրատուն փորձել է կապ հաստատել Ընկերության հետ՝ պարզելու՝ արդյոք վերջինս ստացել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը, Պատվիրատուի ներկայացուցիչը պատասխանել է, որ մի քանի անգամ կապ հաստատելով Ընկերության ներկայացուցչի հետ տեղեկացվել է, որ Ընկերությունը ստացել է պայմանագիր կնքելու ծանուցումը, սակայն բանկի հետ կապված խնդիրների պատճառով չի կարողանում սահմանված ժամկետում ներկայացնել ծանուցմամբ պահանջվող բանկային երաշխիքի ձևով որակավորման ապահովումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/11» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն:

2. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 04.02.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն Մրցույթի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած (հաղթող) մասնակից:

3. Նույն արձանագրությամբ կայացվել է Ընկերության հետ՝ որպես ընտրված մասնակից, պայմանագիր կնքելու որոշում:

4. 10.02.2020թ. «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու պայմանագրի նախագծի կնքված երկուական օրինակները, պայմանագրի ապահովումը (միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի տեսքով (պայմանագրի գնի տաս տոկոսի չափով), որակավորման ապահովումը (բանկային երաշխիքի ձևով (շինարարական աշխատանքների նախահաշվային գնի 10 տոկոսի չափով), ինչպես նաև դրա ներկայացման գրությունը, որը պետք է հաշվառվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության փաստաթղթաշրջանառության համակարգում: Նշված ժամկետում վերը նշված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

5. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 25.02.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը պարտավոր էր պայմանագիրը կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 24.02.2020թ.) Պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել:

6. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ, գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.03.2020թ. թիվ 26/26-1/3391-2020

գրությունը, Երևանի քաղաքապետարանի 28.02.2020թ. թիվ 01/61-4049 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. ***որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,***

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսին:

Նույն կետի 10-րդ ենթակետով սահմանվում է, որ **<u>եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա</u>**, և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են **<u>միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:</u>**

Հրավերի 10-րդ կետի 10.1-րդ, 10.2-րդ և 10.4-րդ ենթակետերի համաձայն՝

10.1 ***<u>Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից 10</u>***, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում 15 ***<u>աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված</u>***

<u>մասնակիցը պարտավոր է ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:</u>

10.2 Մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսի չափով:

10.4 ***<u>Եթե գնման ընթացակարգը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա</u>*** և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա ***<u>որակավորման</u>*** և պայմանագրի ***<u>ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:</u>***

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/11» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 04.02.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ն Մրցույթի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած (հաղթող) մասնակից:

Նույն արձանագրությամբ կայացված կայացվել է Ընկերության հետ՝ որպես ընտրված մասնակից, պայմանագիր կնքելու որոշում:

10.02.2020թ. «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցում և պայմանագրի նախագիծ՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու պայմանագրի նախագծի կնքված երկուական օրինակները, պայմանագրի ապահովումը (միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի տեսքով (պայմանագրի գնի տաս տոկոսի չափով), որակավորման ապահովումը (բանկային երաշխիքի ձևով (շինարարական աշխատանքների նախահաշվային գնի 10 տոկոսի չափով), ինչպես նաև դրա ներկայացման գրությունը, որը պետք է հաշվառվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության փաստաթղթաշրջանառության համակարգում: Նշված ժամկետում վերը նշված

փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 25.02.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը պարտավոր էր պայմանագիրը կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 24.02.2020 թվականը) Պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է, որ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ընկերությունը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՍՑ-ՆԳ-2020/46 ընթացակարգի քննության շրջանակներում դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել Մրցույթի շրջանակում ձեռք բերվող ծառայության մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակված լինելը հավաստող համապատասխան հղումը և/կամ կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ համաձայն՝ (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) տեղեկագրում հրապարակված համապատասխան գնումների պլանի և Մրցույթի հրավերի՝ «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/11» ծածկագրով բաց մրցույթն իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա (ֆինանսական միջոցներ չնախատեսված լինելու պայմանով):

Ընդ որում՝ Կարգի 32-րդ կետի 10-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե ***գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա***, և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ***ապա որակավորման*** և պայմանագրի ***ապահովումները ներկայացվում են միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:***

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ ***Պատվիրատուն «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին*** պայմանագիր կնքելու մասին 10.02.2020թ. ուղարկված ծանուցմամբ ***առաջարկել է*** 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ***ներկայացնելու որակավորման ապահովումը***

բանկային երաշխիքի ձևով (շինարարական աշխատանքների նախահաշվային գնի 10 տոկոսի չափով):

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից խախտվել է որակավորման ապահովման ներկայացման պահանջը, որպիսի պահանջը հստակ սահմանված է Կարգի 32-րդ կետի 10-րդ ենթակետով՝ փաստացի արհեստական խոչընդոտներ ստեղծելով Ընկերության համար:

Նման փաստական հանգամանքներով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով ՍՑ-ՆԳ-2020/46 ընթացակարգի քննության շրջանակներում հրավիրված նիստին Պատվիրատուի հայտնած դիրքորոշումը՝ գտնում եմ, որ հնարավոր չէ արձանագրել «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստիև գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.03.2020թ. թիվ 26/26-1/3391-2020 գրությամբ «Արստակ-Իմպէքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**